

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 1 (86)

2020 թ.

Գլխավոր խմբագիր՝  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,  
ի.գ.դ., պրոֆ. Գագիկ Ղազինյան

Խ մ ք ա գ ր ա կ ա ն խ ո ղ Ի ո լ ր ղ

Սամվել Դիլբանդյան - ի.գ.դ.

Գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան - ի.գ.թ

Գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Նիկոլայ Ստոյկո - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Ղավիթ Ավետիսյան - ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.դ.

Վահե Հովհաննիսյան - ի.գ.դ.

Տարոն Սիմոնյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության  
ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավագիտության ֆակուլտետ:

Հեռ. 060-71-02-47

Էլ. կայք՝

[http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է

հրապարակել նյութեր՝ համամիտ

չլինելով հեղինակների

տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի

չպատվիրված նյութերը չեն

ընդունվում:

e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)

Ղախիչ՝ 77771

Տպագրական 8 մամուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

24.12.2019

Հանձնված է տպագրության

15.05.2020

---

С О Ю З Ю Р И С Т О В Р А  
Ю Р И Д И Ч Е С К И Й Ф А К У Л Ъ Т Е Т Е Г У

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 1 (86)  
2020 г.

Главный редактор:  
академик НАН РА,  
д.ю.н., проф. Гагик Казинян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Р е д а к ц и о н н ы й с о в е т

Самвел Дилбандян - д.ю.н.

зам. главного редактора

Карен Геворгян - к.ю.н.

зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Николай Стойко - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Ваге Оганнесян - д.ю.н.

Тарон Симонян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)  
web: [http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

8 усл. печ. л.  
Тираж: 500  
Сдано в набор 24.12.2019  
Подписано к печати 15.05.2020

## ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՏԵՂԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### Արմեն Զաքարյան

*ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ,  
ԱՄՆ-ի կենտրոնական հրամանատարությունում ՀՀ ՋՈՒ  
փոխգործողության սպա, փոխգնդապետ*

Միջազգային իրավունքում հավաքական անվտանգության հայեցակարգի սկզբնավորումը կապում են Վեստֆալիայի 1648 թ. խաղաղության համաձայնագրի հետ, որում տեղ էին գտել հավաքական անվտանգությանն ուղղված մի շարք պայմանավորվածություններ<sup>1</sup>: «Հավաքական անվտանգություն» (collective security) եզրույթը միջազգային իրավունքի գիտությունում սկսեց կիրառվել հիմնականում XX-րդ դարում: Հավաքական անվտանգության և հավաքական պաշտպանության շուրջ քննարկումները հատկապես աշխուժացան Առաջին աշխարհամարտի ավարտից հետո, ինչը բերեց Ազգերի լիգայի ստեղծմանը, և այն իր արտահայտությունը գտավ նաև 1928 թ.-ին ստորագրված Բրիան-Կելլոգի պակտում<sup>2</sup>: Իհարկե, Ազգերի Լիգան չիրականացրեց իր վրա դրված հիմնական խնդիրները՝ խաղաղության պահպանումը և միջազգային համագործակցության զարգացումը, ինչն էլ հանգեցրեց այդ կազմակերպության կազմալուծմանը ու նոր միջազգային կազմակերպության՝ ՄԱԿ-ի ստեղծմանը:

Երկրորդ աշխարհամարտից հետո հիմնադրելով Միավորված ազգերի կազմակերպությունը՝ պետությունների միջազգային ընտանիքը փորձեց խուսափել այն սխալներից, որոնք հանգեցրին Ազգերի լիգայի գործունեության ձախողմանը և նոր համաշխարհային պատերազմի բռնկմանը: Մասնավորապես՝ ՄԱԿ-ը խուսափեց բոլոր անդամ երկրներին վետտոյի իրավունքով օժտելուց, օրինականացրեց հավաքական ուժի կիրառումը և հիմքեր ստեղծեց միասնական զինված խաղաղապահ ուժերի ձևավորման համար:

Պետք է նշել, որ ՄԱԿ-ի կանոնադրության տեքստում «հավաքական անվտանգություն» եզրույթն ուղղակիորեն չի գործածվում. կանոնադրության 1-ին և 51-րդ հոդվածներում կիրառվում են՝ «հավաքական միջոցներ» (collective measures) և «հավաքական ինքնապաշտպանություն» (collective self-defence) արտահայ-

<sup>1</sup> Վեստֆալիայի հաշտության պայմանագիրը կազմված էր 1648թ. հոկտեմբերի 24-ին Հռոմի Սրբազան Կայսրության և Շվեդիայի, Ֆրանսիայի միջև կնքված երկու առանձին պայմանագրերից, որոնք վերջ դրեցին բողոքական և կաթոլիկ պետությունների միջև 30 տարի տևած պատերազմին: Տե՛ս նաև **Benjamin Straumann**, *The Peace of Westphalia as a Secular Constitution*, *CONSTELLATIONS VOLUME 15*, no. 2, 2008, էջ 178, [http://nyu.academia.edu/BenjaminStraumann/Papers/420063/The\\_Peace\\_of\\_Westphalia\\_As\\_a\\_Secular\\_Constitution](http://nyu.academia.edu/BenjaminStraumann/Papers/420063/The_Peace_of_Westphalia_As_a_Secular_Constitution).

<sup>2</sup> Տե՛ս **Kellogg-Briand Pact 1928**, officially *General Treaty for Renunciation of War as an Instrument of National Policy*, [http://avalon.law.yale.edu/20th\\_century/kbpact.asp](http://avalon.law.yale.edu/20th_century/kbpact.asp): Բրիան-Կելլոգի պակտը ստորագրվել է Փարիզում 1928 թ. օգոստոսի 27-ին ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի և Գերմանիայի միջև, որով նախատեսվում էր պատերազմի բացառումը ազգային քաղաքականության մեջ: 1929 թ. պակտին միացան մի շարք այլ երկրներ:

տությունները<sup>1</sup>: Չնայած դրան՝ հավաքական անվտանգության գաղափարը դրվել է ՄԱԿ-ի ստեղծման հիմքում, և ՄԱԿ-ի Կանոնադրության 1-ին հոդվածի համաձայն՝ վերջինիս նպատակներից են՝ միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը և այդ նպատակով արդյունավետ **հավաքական միջոցների** ձեռնարկումը խաղաղությանն ուղղված սպառնալիքները կանխելու և վերացնելու, ազդեցիկի ակտերը կամ խաղաղությանը սպառնացող այլ գործողությունները ճնշելու համար և այլն:

ՄԱԿ-ի կանոնադրությունը հավաքական անվտանգության ապահովման գործում մեծ լիազորություններ է վերապահում Անվտանգության խորհրդին<sup>2</sup>: Սա այն հիմնական կառույցն է, որը պատասխանատու է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար:

Միջազգային իրավունքի մի շարք տեսաբանների (Հիտոչի Նատու, Էկե Օնյեմաչի, Ջորջ Շվարցենբերգեր, Ջոզեֆ Էբեգբուլեմ և այլք) հավաքական անվտանգության հայեցակարգին տրված սահմանումներն ընդհանրացնելով՝ կարող ենք հանգել համառոտ ձևակերպման. նշված հայեցակարգը միջազգային խաղաղությանը և անվտանգությանն ուղղված սպառնալիքներն ու դրանց դեմ պետությունների հավաքական ուժերով պայքարի միջոցները սահմանող միջազգային պայմանավորվածություններն են:

Անփոփելով վերոնշյալը՝ կարող ենք արձանագրել, որ հավաքական անվտանգությունը միջազգային իրավունքի զարգացման և դրա հիմնարար փաստաթղթերից մեկի՝ ՄԱԿ-ի կանոնադրության 24-րդ հոդվածի հիման վրա ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից հավաքական մարմին՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման գործում վերապահված իրավազորության արգասիք է, որի ուժով նորմատիվ հիմք է ստեղծվել միջազգային հարաբերություններում պետությունների վարքագիծը և նրանց միջև ծագող կոնֆլիկտները կարգավորելու համար:

Հավաքական անվտանգությունն ապահովում է հավաքական արձագանքի օրինականացման ինստիտուցիոնալացված ընթացակարգեր, որոնք նախատեսված են ավանդական, ռազմական սպառնալիքներին արձագանքելու և միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար:

Ըստ միջազգային իրավունքի տեսաբան Վ. Հոգանի՝ հավաքական անվտանգություն եզրույթի շուրջ հիմնական տարակարծությունները ծագում են այն դրպես նպատակ, իրավիճակ և մեթոդ օգտագործումը տարբերակելու ձախողումից<sup>3</sup>: Ըստ Վ. Հոգանի՝ հավաքական անվտանգության նպատակն է հասնել այնպիսի իրավիճակի, որում ազդեցիկի ակտեր կամ խաղաղության դեմ ուղղված այլ գործողություններ տեղի չեն ունենա: Եթե այս նպատակն իրականանում է, ապա աշխարհը կլինի հավաքական անվտանգության իրավիճակում: Հավաքական անվտանգության մեթոդը միասնական գործողությունն է, որը հիմնված է միջազգային կայուն հասարակարգ հաստատելուն ուղղված նպատակի վրա:

### *Հավաքական անվտանգության կառուցակարգերը*

Գոյություն ունեն հավաքական անվտանգության համակարգերի երկու հիմնա-

<sup>1</sup> Տե՛ս ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին և 51-րդ հոդվածները, [http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter\\_arm.pdf](http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter_arm.pdf)

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, Գլուխ 7, [http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter\\_arm.pdf](http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter_arm.pdf)

<sup>3</sup> Տե՛ս **Williard N. Hogan**, International conflict and collective security, <https://books.google.com/books?id=678fBgAAQBAJ&printsec=frontcover&dq=failure+of+collective+security&hl=en&sa=X&ved=0ahUKEWjE3Z2B-ebfAhVhU8tKHW-CBvWQ6AEINTAD#v=onepage&q&f=false>, էջ 181:

կան տեսակ՝ համընդհանուր և տարածաշրջանային: Պետությունների հավաքական անվտանգության համընդհանուր ամենամեծ կազմակերպությունը ՄԱԿ-ն է: Միավորված ազգերի կազմակերպությունը, հանդիսանալով պետությունների հավաքական անվտանգության համընդհանուր ամենամեծ կազմակերպությունը, իր գործունեության շուրջ յոթ տասնամյակների ընթացքում իրականացրել է հիմնական խնդիրներից մեկը՝ համաշխարհային նոր պատերազմի կանխարգելումը: Դժբախտաբար պատերազմները միշտ էլ ուղեկցել են մարդկությանը ու աշխարհի տարբեր մասերում մինչ օրս շարունակվում են, և մոտ ապագայում էլ չեն դադարի զինված հակամարտությունները, որոնք բարեբախտաբար դեռևս չեն վերաճում համաշխարհային նոր պատերազմի:

ՄԱԿ-ի հավաքական անվտանգության համակարգի հիմքը կազմում է ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետը՝ միջազգային հարաբերություններում ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժի և դրա կիրառման սպառնալիքից զերծ մնալու սկզբունքը և Կանոնադրության 48, 49 հոդվածներով ամրագրված՝ խաղաղության ու միջազգային անվտանգության պահպանմանն ուղղված Անվտանգության խորհրդի որոշումների իրականացմանն ուղղված գործողությունների հավաքական ուժերով, բոլոր պետությունների կողմից կատարումը<sup>1</sup>:

Այսինքն, ՄԱԿ-ի կանոնադրությունը՝ ժամանակակից միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերից մեկը, միջազգային հարաբերություններում արգելում է ուժի կամ դրա սպառնալիքի կիրառումը: Ուժի չկիրառման սկզբունքից բացառություն են ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածում ամրագրված՝ պետությունների անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության իրավունքը և կանոնադրության VII գլխի համաձայն՝ Անվտանգության խորհրդի կողմից միջազգային խաղաղությանը և անվտանգությանն ուղղված անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը:

Համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության՝ եթե ՄԱԿ-ի անդամ որևէ պետություն զինված հարձակման է ենթարկվում, ապա իրավունք ունի կիրառելու կանոնադրության 51-րդ հոդվածով ամրագրված անհատական կամ հավաքական պաշտպանության իրավունքը, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկել միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանմանն ուղղված միջոցներ:

Հավաքական անվտանգության համակարգում միջազգային խաղաղության և անվտանգության դեմ պետության կամ պետությունների ցանկացած ոտնձգություն պետք է համապատասխան արձագանքի արժանանա: Ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 39-րդ հոդվածի՝ Անվտանգություն խորհուրդն է որոշում խաղաղության նկատմամբ ցանկացած սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը և համապատասխան առաջարկներ է ներկայացնում կամ որոշում ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն կանոնադրության 41-րդ և 42-րդ հոդվածներին համապատասխան<sup>2</sup>:

### *Հավաքական անվտանգության հայեցակարգի իրացումը խոչընդոտող միջազգային իրավական հիմնախնդիրները*

ՄԱԿ-ի և միջազգային խաղաղության ու անվտանգության համար պատասխանատու նրա հիմնական մարմնի՝ Անվտանգության խորհրդի արդյունավետ գործունեությունը ու հավաքական անվտանգության իրացումը խոչընդոտող իրավական հիմնախնդիրները բավականին մեծ թիվ են կազմում:

ՄԱԿ-ի հիմնադրումից ի վեր միջազգային անվտանգության բազմաթիվ նոր

<sup>1</sup> Տե՛ս ՄԱԿ-ի կանոնադրություն, 2-րդ, 48-րդ, 49-րդ հոդվածներ, [http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter\\_arm.pdf](http://www.un.am/up/file/1.%20UN%20Charter_arm.pdf)

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, 39-րդ հոդված:

սպառնալիքներ են ի հայտ եկել՝ միջազգային ահաբեկչություն, կիբեռնարձակումներ, ոչ պետական ակտորների դերի մեծացում, գլոբալ կլիմայական փոփոխություններ, տարաբնույթ համաճարակներ և այլն: Ակնհայտ է, որ առկա միջազգային իրավական կառուցակարգերը, մասնավորապես հավաքական անվտանգության համակարգը, որը ստեղծվել է Երկրորդ աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո, ներկա՝ փոխակերպվող աշխարհաքաղաքական զարգացումների պայմաններում չի կարող լիարժեքորեն արձագանքել միջազգային նոր անվտանգային սպառնալիքներին: ՄԱԿ-ի Կանոնադրության 39-րդ հոդվածում ներառված են միջազգային անվտանգության հիմնական, այսպես կոչված՝ ավանդական սպառնալիքները՝ խաղաղության նկատմամբ սպառնալիքը, խաղաղության խախտումները կամ ագրեսիան:

Հաշվի առնելով ՄԱԿ-ի հիմնադրումից ի վեր միջազգային անվտանգության ոլորտում արձանագրված զարգացումները, անվտանգային նոր սպառնալիքների առաջացումը, կարծում ենք, որ ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը պետք է ձեռնամուխ լինի այդ ոլորտում թերի կարգավորված կամ դեռևս չկարգավորված միջազգային հարաբերությունների կարգավորմանն ուղղված միջազգային համապատասխան փաստաթղթերի նախագծերի մշակմանը:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արդյունավետ գործունեությունը և հավաքական անվտանգության առկա կառուցակարգերի կիրառումը խոչընդոտող հիմնական խնդիրներից է նաև այն, որ ՄԱԿ-ի Աև մշտական հինգ անդամները միատեսակ իրավական դիրքորոշում չունեն միջազգային հարաբերություններում ուժի կիրառման հիմքերի առնչությամբ և տարաբնույթ մեկնաբանություններ են տալիս ՄԱԿ-ի Կանոնադրության համապատասխան դրույթներին՝ պարբերաբար օգտվելով վետտոյի իրավունքի կիրառումից:

Բոլորի համար XXI դարում հավաքական անվտանգությունն ապահովելու խնդրին 2003 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստի ընթացքում անդրադարձավ գլխավոր քարտուղար Ք. Անանը<sup>1</sup>: Նա առաջարկեց ստեղծել բարձր մակարդակի հանձնաժողով, որը պետք է գնահատեր միջազգային խաղաղության և անվտանգության ժամանակակից մարտահրավերները և դրանց դեմ պայքարում առկա ընթացակարգերը, հաստատությունները և հավաքական անվտանգություն կառուցակարգերն ապահովելու նպատակով առաջարկություններ ներկայացներ ՄԱԿ-ին<sup>2</sup>:

Զեկույցում ընդգծվում է, որ 21-րդ դարի հիմնական մարտահրավերներից մեկը հավաքական անվտանգության առավել տարածական ըմբռնումն է, դրա նշանակության, պարտականությունների, պարտավորությունների շուրջ միասնական մոտեցման բացակայությունը<sup>3</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, ՄԱԿ-ի կանոնադրությունը միջազգային հարաբերություններում արգելում է ուժի կամ դրա սպառնալիքի կիրառումը, բացառությամբ անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության իրավունքի կիրառման դեպքերի և Կանոնադրության VII գլխի համաձայն՝ Անվտանգության խորհրդի կողմից միջազգային խաղաղությանը և անվտանգությանն ուղղված անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը: Այսինքն, այս դեպքերում է միայն, որ պետությունները կարող են, հենվելով միջազգային իրավունքի վրա, կիրառել ուժ, սակայն այսօր ականատես ենք, թե ինչպես են մի շարք պետություններ և միջազգային իրավունքի տեսաբաններ փորձում ստեղծել ուժի կիրառման այնպիսի նոր հիմքեր, որոնք հնարա-

<sup>1</sup> Տե՛ս **A more secure world: our shared responsibility Report of the High-level Panel on Threats, Challenges and Change**, [https://www.un.org/ruleoflaw/files/gaA.59.565\\_En.pdf](https://www.un.org/ruleoflaw/files/gaA.59.565_En.pdf)

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, զեկույցի 5-րդ կետ, էջ 2:

վորություն կտան շրջանցել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի լիազորությունները: Ընդ որում այդ հիմքերին տրվում են բավականին գրավիչ անվանումներ՝ «հումանիտար ինտերվենցիա», «պաշտպանելու պարտականություն», «կանխարգելիչ հարված» և այլն:

Եթե խմբավորելու լինենք հավաքական անվտանգության հայեցակարգի իրացումը խոչընդոտող միջազգային իրավական հիմնախնդիրները, ապա դրանք կարելի է բաժանել հետևյալ հիմնական խմբերի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից որոշումների ընդունման գործող ընթացակարգերի, մասնավորապես մշտական անդամների վետոտոյի իրավունքի չարաշահումը, ուժի կիրառման նոր հիմքերի ստեղծման փորձեր և անհատական/հավաքական ինքնապաշտպանության իրավունքի սխալ կիրառում:

### *ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների կողմից վետոտոյի իրավունքի չարաշահումը*

ՄԱԿ-ի կանոնադրության 27-րդ հոդվածը սահմանում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում քվեարկության և որոշումների ընդունման կարգը: Ըստ 27-րդ հոդվածի՝ ընթացակարգային որոշումների ընդունումը պահանջում է խորհրդի ինը անդամների կողմ ձայները, իսկ մնացած բոլոր որոշումների համար անհրաժեշտ է ինը անդամների կողմ ձայները՝ ներառյալ Աև հինգ մշտական անդամների համընկնող ձայները<sup>1</sup>: Այսինքն՝ բացի ընթացակարգային որոշումներից, մնացած այլ որոշումների ընդունման պարագայում ՄԱԿ-ի Աև հինգ մշտական անդամները պետք է «դեմ» չքվեարկեն, չկիրառեն «վետոտոյի» իրենց իրավունքը կամ առնվազն ձեռնպահ մնան քվեարկությունից:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամներին օժտելով հատուկ իրավական վիճակով՝ վետոտոյի իրավունքով՝ Միավորված ազգերի կազմակերպությունը փորձեց խուսափել իր իրավանախորդի՝ Ազգերի լիգայի հիմնական սխալներից մեկից՝ բոլոր անդամներին վետոտոյի իրավունքով օժտելուց և նման իրավունք վերապահեց միայն Երկրորդ աշխարհամարտում հաղթանակած և միջուկային զենք ունեցող պետություններին: Հարկ է նշել, որ վետոտոյի իրավունքով օժտումը վճռորոշ դեր է խաղացել ԱՄՆ-ի և ԽՍՀՄ Միավորված ազգերի կազմակերպության անդամակցելու հարցում: Հակառակ դեպքում հնարավոր է՝ ԱՄՆ-ն երբևէ չդառնար ՄԱԿ-ի անդամ, իսկ ԽՍՀՄ-ը դուրս գար դրա կազմից, ինչպես դա եղավ Ազգերի լիգայի պարագայում<sup>2</sup>: ՄԱԿ-ի հիմնադրումից հետո աշխարհը մինչ օրս խուսափել է նոր համաշխարհային պատերազմի բռնկումից, ինչում իհարկե կարևոր դեր է խաղացել ՄԱԿ-ի Աև հինգ մշտական անդամների վետոտոյի իրավունքով օժտված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը չի ընդունել որևէ որոշում, որը չի բխում ՄԱԿ-ի Աև հինգ մշտական անդամների շահերից, և այսպիսով խույս է տրվել համաշխարհային ասպարեզում մեծ կշիռ ունեցող, միջուկային պետությունների միջև հնարավոր ռազմական բախման, նոր աշխարհամարտի ծագման վտանգից:

Խոսելով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների կողմից վետոտոյի իրավունքի կիրառման դրական պրակտիկայից՝ իհարկե չենք կարող չնշել նաև դրա պարբերական կիրառման բացասական կողմերի մասին: Միջազգային խաղաղությանը և անվտանգությանը սպառնացող իրավիճակներում ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն է իրավասու Կանոնադրության 41-րդ և 42-րդ հոդված-

<sup>1</sup> Տե՛ս **ՄԱԿ-ի կանոնադրություն**, 27-րդ հոդված, [http://www.un.org/charter/1.%20UN%20Charter\\_arm.pdf](http://www.un.org/charter/1.%20UN%20Charter_arm.pdf)

<sup>2</sup> Տե՛ս **Thomas G. Weiss and Giovanna Kuele**, The Veto: Problems and Prospects: <https://www.e-ir.info/2014/03/27/the-veto-problems-and-prospects/>

ներին համապատասխան որոշելու, թե առանց զինված ուժերի կիրառման կամ դրա կիրառմամբ ինչպիսի միջոցներ պետք է ձեռնարկվեն միջազգային անվտանգությունը և խաղաղությունը պահպանելու կամ վերականգնելու համար<sup>1</sup>: Սակայն նման իրավիճակներում վետտոյի պարբերական կիրառումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների կողմից քաղաքական և այլ նկատառումներով կաթվածահար է անում նրա գործունեությունը, հնարավորություն չի ընձեռում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խաղաղության նկատմամբ սպառնալիքի, խաղաղության խախտման կամ ագրեսիայի ակտի առկայությունը որոշելու հարցում:

Հարկ է նշել, որ մինչ 1990-ական թվականները ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ընդամենը երկու անգամ է թույլատրել զինված ուժի կիրառումը ՄԱԿ-ի կանոնադրության 42-րդ հոդվածի ներքո՝ 1950 թ.-ին Հյուսիսային Կորեայի և 1990 թ.-ին Իրաքի նկատմամբ<sup>2</sup>: Առաջին դեպքում Անվտանգության խորհրդի նիստերը բոյկոտում էր Խորհրդային Միությունը, իսկ երկրորդ դեպքը տեղի ունեցավ «սառը պատերազմի» ավարտից հետո, երբ ԽՍՀՄ-ը որոշել էր չխոչընդոտել արևմտյան բլոկի գործողությունները Իրաքի դեմ<sup>3</sup>: Իհարկե դա չի նշանակում, որ միջազգային խաղաղությանը և անվտանգությանը սպառնացող և զինված ուժերի միջամտություն պահանջող իրավիճակներն ընդամենը նշված երկու դեպքերն են եղել: Ակնհայտ է, որ մի շարք արյունալի հակամարտությունների՝ Կիպրոս, Շրի Լանկա, Կոսովո, Պաղեստին, Սիրիա և այլն, լուծման հարցում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ձախողման գործում հիմնական գործոնը ՄԱԿ-ի Աև մշտական անդամների կողմից վետտոյի կիրառումն է եղել<sup>4</sup>:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում վետտոյի իրավունքը 1946-1970 թթ. հիմնականում կիրառվել է նախկին Խորհրդային Միության կողմից: Այնուհետև Ռուսաստանի Դաշնությունը վետտոյի իրավունքը կիրառել է շուրջ երկու տասնյակ անգամ, մեծ թիվ են կազմում նաև ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից վետտոյի կիրառման դեպքերը<sup>5</sup>: Համեմատաբար ամենաքիչը վետտոյի իրավունքը կիրառել է Չինաստանը:

1990 թ.-ից սկսած ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից ՄԱԿ-ի Կանոնադրության VII գլխի ներքո ուժի կիրառումը լիազորելու դեպքերը ավելի մեծ թիվ են կազմել<sup>6</sup>: Իհարկե պարզ է, որ «սառը պատերազմը» Անվտանգության խորհրդի լիարժեք գործունեությունը խոչընդոտող հիմնական հանգամանքներից մեկն էր, և դրա ավարտից հետո վերջինիս գործունեությունը բավականին աշխուժացել է, սակայն, իհարկե, ունենալով տարբեր դիրքորոշում և քաղաքական նկատառումներից ելնելով՝ ՄԱԿ-ի Աև մշտական անդամների կողմից մեծաթիվ են վետտոյի կիրառման ու միջազգային խաղաղության, անվտանգության հաստատմանն ուղղված Աև բանաձևերի արգելափակման դեպքերը:

Ցավալի է նաև արդեն 8 տարի շարունակվող ամենարյունալի, հարյուր հազա-

<sup>1</sup> Տե՛ս **ՄԱԿ-ի կանոնադրություն**, 41-րդ և 42-րդ հոդվածները, [http://www.un.org/charter/1.%20UN%20Charter\\_arm.pdf](http://www.un.org/charter/1.%20UN%20Charter_arm.pdf)

<sup>2</sup> Տե՛ս What kind of measures involving the use of armed force has the Security Council imposed in the past?, <https://www.un.org/securitycouncil/content/faq#sanctions>

<sup>3</sup> Տե՛ս **Stefan Aleksovski**, Collective Security – The Role of International Organizations – Implications in International Security Order, <http://www.mcser.org/journal/index.php/mjss/article/view/5080/4903>, էջ 277,

<sup>4</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Աև մշտական անդամների կողմից վետտոյի կիրառմամբ արգելափակված բանաձևերի ցանկը, Security Council - Veto List, <http://research.un.org/en/docs/sc/quick/veto>

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, Security Council - Veto List (in reverse chronological order), <http://research.un.org/en/docs/sc/quick/veto>

<sup>6</sup> Տե՛ս What kind of measures involving the use of armed force has the Security Council imposed in the past?, <https://www.un.org/securitycouncil/content/faq#sanctions>

րավոր կյանքեր խլած հակամարտություններից մեկի՝ սիրիական հակամարտության կարգավորման գործում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «կաթվածահար վիճակը» 2011-2018 թթ. ընթացքում ՄԱԿ-ի Սև Սիրիայի հակամարտության կարգավորման հարցով 18 բանաձևերի նկատմամբ որոշ մշտական անդամների կողմից վետտոյի իրավունքի կիրառման հետևանքով<sup>1</sup>: Իհարկե խնդիրը վետտոների քանակական կիրառումը չէ, այլ այն, որ դրանով խոչընդոտվում է Անվտանգության խորհրդի արդյունավետ աշխատանքը, արգելափակվում են բանաձևեր, որոնք կարող էին հիմք հանդիսանալ միջազգային խաղաղության ու անվտանգության վերականգման հավաքական միջոցների կիրառման ու համաշխարհային հանրության խաղաղ գոյակցության ապահովման համար:

### «Հումանիտար ինտերվենցիա» և պաշտպանելու պարտականություն

«Հումանիտար ինտերվենցիա» (humanitarian intervention) դոկտրինի արմատները որոշ գիտնականներ կապում են 13-րդ դարի փիլիսոփա Թոմա Աքվինացու հետ, որը նշում էր, որ մի միապետը իրավունք ունի միջամտելու մեկ այլ միապետի գործերին, երբ վերջինս ընդունելի սահմաններից դուրս վատ վերաբերմունք է դրսևորում իր հպատակների նկատմամբ<sup>2</sup>:

«Հումանիտար ինտերվենցիա» եզրույթը պետությունների կողմից ուժի կիրառման տեսանկյունից գործածվում է հիմնականում երկու առումով: Նախկինում այն կիրառվում էր որպես պետության պարտականություն՝ պաշտպանելու այլ պետությունում գտնվող իր քաղաքացիներին, երբ տվյալ պետությունը ցանկություն չուներ կամ անկարող էր պաշտպանել այդ քաղաքացիներին: Սակայն ներկայումս այն օգտագործվում է որպես երրորդ պետության կամ պետությունների կողմից ուժային ներխուժում՝ տվյալ պետության քաղաքացիներին իրենց սեփական պետության գործողություններից կամ անգործությունից պաշտպանելու նպատակով<sup>3</sup>:

1990-ականներին Բալկաններում և Ռուանդայում տեղի ունեցած ողբերգություններից հետո տարբեր միջազգային հարթակներում սկսեցին քննարկումներ ծավալվել, թե ինչպես պետք է համաշխարհային հանրությունը արդյունավետորեն արձագանքի քաղաքացիների մարդու իրավունքների կոպիտ և պարբերական ոտնահարումների նման դեպքերին: Նշված հարցին 2000 թ.-ին Հազարամյակի իր զեկույցում անդրադարձավ նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանը՝ հարցադրում ուղղելով անդամ պետություններին, թե ինչպիսին պետք է լինի արձագանքը մարդու իրավունքների ծավալում և կոպիտ խախտումների դեպքում, եթե հումանիտար ինտերվենցիան պետության ինքնիշխանության դեմ անթույլատրելի հարձակում է<sup>4</sup>:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հարցադրմանն ի պատասխան՝ Կանադայի կառավարության կողմից 2000 թ. սեպտեմբերին ստեղծվեց ինտերվենցիայի և պետության ինքնիշխանության հարցերով միջազգային անկախ հանձնաժողովը, որի 2002թ. օգոստոսին հրապարակած զեկույցը կոչվում էր «Պաշտպանելու պարտա-

<sup>1</sup> Տե՛ս Սիրիայի հարցով վետտոյի կիրառման հետևանքով չընդունված ՄԱԿ-ի Սև բանաձևերի նախագծերի ցանկը, [https://www.securitycouncilreport.org/un\\_documents\\_type/other-documents/page/1?ctype=Syria&cbtype=syria#038;cbtype=syria](https://www.securitycouncilreport.org/un_documents_type/other-documents/page/1?ctype=Syria&cbtype=syria#038;cbtype=syria)

<sup>2</sup> Տե՛ս **Jean-Pierre L. Fonteyne**, *The Customary International Law Doctrine of Humanitarian Intervention: Its Current Validity Under the U.N. Charter*, 4 CAL. W. INT'L L.J. 203, 214 (1974)., ինչպես նաև Nikolai Krylov, *Humanitarian Intervention: Pros and Cons*, 17 Loy. L.A. Int'l & Comp. L. Rev. 365 (1995), <http://digitalcommons.lmu.edu/ilr/vol17/iss2/3>, էջ 368:

<sup>3</sup> Տե՛ս **Michael Wood**, «International Law and the use of force: What happens in practice?», *Indian Journal of International Law*, Vol. 53, [http://legal.un.org/avl/pdf/ls/Wood\\_article.pdf](http://legal.un.org/avl/pdf/ls/Wood_article.pdf), էջ 360:

<sup>4</sup> Տե՛ս *Responsibility to Protect*, <https://www.un.org/en/genocideprevention/about-responsibility-to-protect.shtml>

կանություն»։ Հանձնաժողովը գտնում էր, որ ինքնիշխանությունը պետությանը ոչ միայն իրավունք է տալիս վերահսկելու իր ներքին գործերը, այլև պետության հիմնական պարտականությունն է պաշտպանել իր սահմաններում ապրող քաղաքացիներին։ Եթե պետությունն անկարող է կամ պատրաստակամ չէ պաշտպանելու իր քաղաքացիներին, ապա այդ պարտականությունը փոխանցվում է միջազգային առավել լայն հանրությանը<sup>1</sup>։ Ջեկոյցում մանրամասն անդրադարձ էր կատարվում միջազգային հանրության կողմից նման դեպքերում հնարավոր արձագանքի և պաշտպանելու պարտականության՝ հումանիտար ինտերվենցիայի իրականացման պայմաններին, իրավական կողմերին և ՄԱԿ-ի կանոնադրությամբ նման որոշում ընդունելու իրավագործությամբ օժտված մարմնի՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի լիազորություններին։

«Պաշտպանելու պարտականության» և «հումանիտար ինտերվենցիայի» հայեցակարգերի շրջանառության մեջ դրվելուց հետո այն արագորեն սկսեց ընկալվել որպես պատերազմ սկսելու իրավական և օրինական պատճառներից մեկը՝ ինքնապաշտպանության և ՄԱԿ-ի ԱԽ կողմից ուժի կիրառման թույլտվության հետ միասին<sup>2</sup>։ Այդ հայեցակարգը լայնորեն ընդունված է, բայց միաժամանակ ունի բավականին վիճահարույց կողմեր, և ինչպես վկայում է վերջին տարիների պրակտիկան, մի շարք պետություններ փորձել են դրա անվան ներքո օրինականացնել ռազմական գործողությունների ձեռնարկումը։

ՄԱԿ-ի 2005 թ. համաշխարհային գագաթաժողովն անդրադարձավ «Պաշտպանելու պարտականություն» հայեցակարգին։ Գագաթաժողովի եզրափակիչ փաստաթղթում նշվում էր, որ պետություններն ունեն իրենց բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ ուղղված հանցագործություններից պաշտպանելու պարտավորություն։

Մեր կարծիքով, միջազգային հանրությունը ՄԱԿ-ի միջոցով ևս պարտավոր է օգտագործել դիվանագիտական, հումանիտար և այլ խաղաղասիրական միջոցներ բնակչությանը նման հանցագործություններից պաշտպանելու համար։ Եթե խաղաղ միջոցները բավարար չեն, և ազգային իշխանությունները չեն կարողանում պաշտպանել իրենց բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ ուղղված հանցագործություններից, ապա միջազգային հանրությունը պետք է պատրաստ լինի ժամանակին և վճռականորեն, համապատասխան տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությամբ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի միջոցով և ՄԱԿ-ի Կանոնադրությանն ու դրա VII գլխին համապատասխան դեպքից դեպք սկզբունքով հավաքական գործողություն ձեռնարկել<sup>3</sup>։

ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն առաջին անգամ պաշտոնապես անդրադարձել է «Պաշտպանելու պարտականություն» հայեցակարգին 2006 թ. թիվ 1674 բանաձևում, որում մասնավորապես հղում էր կատարվում 2005 թ. Համաշխարհային գագաթաժողովի եզրափակիչ փաստաթղթում ամրագրված՝ բնակչությանը ցեղասպանությունից, պատերազմական հանցագործություններից, էթնիկ զտումներից և մարդկության դեմ ուղղված հանցագործություններից պաշտպանելու պարտավոր-

<sup>1</sup> St`u Report of the International Commission on Intervention and State Sovereignty, <https://undocs.org/A/57/303>

<sup>2</sup> St`u Ian Hurd, Is Humanitarian Intervention Legal? The Rule of Law in an Incoherent World, տես էջ 1, [http://faculty.wcas.northwestern.edu/~ihu355/Home\\_files/is%20hi%20legal.pdf](http://faculty.wcas.northwestern.edu/~ihu355/Home_files/is%20hi%20legal.pdf)

<sup>3</sup> St`u Resolution adopted by the General Assembly on 16 September 2005, <https://undocs.org/A/RES/60/1>, բանաձևի 138-րդ և 139-րդ կետերը։

րության մասին դրույթներին<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը վերջին տարիներին ընդունած մի շարք բանաձևերում անդրադարձել է «Պաշտպանելու պարտականություն» հայեցակարգին և որոշ դեպքերում նույնիսկ թույլատրել անդամ պետություններին բոլոր անհրաժեշտ միջոցառումների, ներառյալ ուժի կիրառումը՝ քաղաքացիական բնակչությանը պաշտպանելու ուղղությամբ:

Լիբիայում 2011 թ.-ին Կադաֆիի ռեժիմի կողմից քաղաքացիական բնակչության նկատմամբ իրականացվող բռնությունները, մարդու իրավունքների կոպիտ և զանգվածային ոտնահարումները, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները դադարեցնելու նպատակով ԱՆ-ն ընդունեց 1970<sup>2</sup> և 1973<sup>3</sup> բանաձևերը: Վերջինս ՄԱԿ-ի անդամներին լիազորում էր անհատապես կամ տարածաշրջանային կազմակերպությունների միջոցով, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և ԱՆ-ին անհապաղ տեղեկացնելով, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ Լիբիայում քաղաքացիական բնակչությանը պաշտպանելու ուղղությամբ<sup>4</sup>: Բանաձևի ընդունումից մի քանի օր անց՝ 2011թ. մարտի 20-ին, ԱՄՆ-ն, Միացյալ Թագավորությունը և Ֆրանսիան ավիահարվածներ հասցրին Լիբիայի կառավարական ուժերի դիրքերի ուղղությամբ<sup>5</sup>:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի՝ 2011թ.-ին Կոտդիվուարում, Հարավային Սուդանում, Եմենում քաղաքացիական բնակչության նկատմամբ իրականացվող բռնությունները դադարեցնելու նպատակով ընդունած համապատասխանաբար 1975<sup>6</sup>, 1996<sup>7</sup>, 2014<sup>8</sup> բանաձևերը ևս անդրադառնում էին յուրաքանչյուր պետության՝ իր բնակչությանը պաշտպանելու առաջնային պարտականությանը:

Ինտերվենցիայի և պետության ինքնիշխանության հարցերով միջազգային անկախ հանձնաժողովի՝ 2002 թ. պատրաստած «Պաշտպանելու պարտականություն» զեկույցում ևս կարևորվում էին հումանիտար նպատակներով ռազմական ինտերվենցիաների դեպքում ՄԱԿ-ի ԱՆ կողմից լիազորված լինելու հանգամանքը<sup>9</sup> և պաշտպանելու պարտականության իրավիճակներում անհրաժեշտ գործողությունների ձեռնարկումը, հակառակ պարագայում կասկածի տակ են դրվելու ՄԱԿ-ի վստահելիությունը և կազմակերպության հասունությունը<sup>10</sup>:

### *«Կեղծ ինքնապաշտպանություն» կամ ինքնապաշտպանության իրավունքի սխալ կիրառում*

Ինչպես արդեն նշել ենք, հավաքական անվտանգության հայեցակարգի իրացումը խոչընդոտող միջազգային իրավական հիմնախնդիրներից է նաև անհատական/հավաքական ինքնապաշտպանության իրավունքի սխալ կիրառումը, այսինքն՝ դրա անվան տակ ուժի ապօրինի կիրառումը միջազգային հարաբերություններում: Նմանօրինակ գործողությունները կարող ենք անվանել «կեղծ ինքնապաշտպա-

<sup>1</sup> Տե՛ս 1674 բանաձևի 4-րդ կետը, Resolution 1674 (2006), [https://undocs.org/S/RES/1674\(2006\)](https://undocs.org/S/RES/1674(2006))

<sup>2</sup> Տե՛ս **Resolution 1970 (2011)**, [https://undocs.org/S/RES/1970\(2011\)](https://undocs.org/S/RES/1970(2011))

<sup>3</sup> Տե՛ս **Resolution 1973 (2011)**, [https://undocs.org/S/RES/1973\(2011\)](https://undocs.org/S/RES/1973(2011))

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում 1973 բանաձևի 4-րդ կետը:

<sup>5</sup> Տե՛ս **Libya: US, UK and France attack Gaddafi forces**, <https://www.bbc.co.uk/news/world-africa-12796972>

<sup>6</sup> Տե՛ս **Resolution 1975 (2011)**, [https://undocs.org/S/RES/1975\(2011\)](https://undocs.org/S/RES/1975(2011))

<sup>7</sup> Տե՛ս **Resolution 1996 (2011)**, [https://undocs.org/S/RES/1996\(2011\)](https://undocs.org/S/RES/1996(2011))

<sup>8</sup> Տե՛ս **Resolution 2014 (2011)**, [https://undocs.org/S/RES/2014\(2011\)](https://undocs.org/S/RES/2014(2011))

<sup>9</sup> Տե՛ս **Report of the International Commission on Intervention and State Sovereignty**, <https://undocs.org/A/57/303>, զեկույցի 6.36 կետը, էջ 54:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղում, զեկույցի 6.39 կետը, էջ 55:

նություն»՝ ինքնապաշտպանության իրավունքի սխալ կիրառում: Խոսելով միջազգային իրավունքում ինքնապաշտպանության իրավունքի կիրառման մասին՝ պետք է անդրադառնանք դրա կիրառման իրավաչափությանը պետությունների, ինչպես նաև ոչ պետական ակտորների դեմ: Վերջիններիս կողմից պետության վրա իրականացվող զինված հարձակման դեմ ինքնապաշտպանության իրականացման հարցն ակտուալ դարձավ հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի դեմ իրականացված ահաբեկչական հարձակումներից հետո. ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց 1368<sup>1</sup> և 1373<sup>2</sup> բանաձևերը, որում անդրադարձ էր կատարվում անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության իրավունքին: 2001 թ. հոկտեմբերի 7-ից ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի մասնակցությամբ Աֆղանստանում մեկնարկեց «Կայուն ազատություն» ռազմական գործողությունը Ալ-Քաիդա ահաբեկչական խմբավորման և Թալիբան ռեժիմի դեմ, որին հետագայում միացան ՆԱՏՕ-ի գլխավորած կոալիցիոն ուժերը<sup>3</sup>: Նշված բանաձևերի դերը ոչ պետական ակտորների դեմ ինքնապաշտպանության իրավունքի իրականացման համար նախադեպի ստեղծման հարցում վիճելի է: Մասնավորապես, *Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունն ընդդեմ Ռիզանդայի* գործով Արդարադատության միջազգային դատարանի դատավոր Սիմմայի առանձին կարծիքում նշվում է, որ 1368 (2001) և 1373 (2001) բանաձևերը չեն կարող դիտվել որպես հաստատում այն տեսակետի, որ ոչ պետական ակտորների լայնածավալ հարձակումները կարող են որակվել որպես «զինված հարձակում» 51-րդ հոդվածի իմաստով<sup>4</sup>:

ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածը սահմանում է պետությունների անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության դիմելու իրավունքը ՄԱԿ-ի անդամներից որևէ մեկի զինված հարձակման ենթարկվելու պարագայում: Հոդվածի շարադրանքից հստակ չէ, թե զինված հարձակումը պետության կողմից իրականացվող հարձակումն է, թե ոչ: Նկատի ունենալով, որ ՄԱԿ-ի կանոնադրությունը կարգավորում է դրա անդամների՝ ինքնիշխան պետությունների միջև առաջացող հարաբերությունները, ապա ակնհայտ է, որ նշված հոդվածում խոսքը պետության կողմից իրականացվող զինված հարձակման մասին է: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1974 թ. դեկտեմբերի 14-ի թիվ 3314 բանաձևում, ինչպես նաև հետագայում Միջազգային քրեական դատարանի՝ Հռոմի Ստատուտում տեղ գտած ագրեսիայի ակտի բնորոշման մեջ ևս խոսվում է պետության կողմից զինված ուժի օգտագործման մասին<sup>5</sup>:

Նշված տեսակետն իր արտահայտությունն է գտել նաև ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի՝ «Պաղեստինյան գրավյալ տարածքներում պատի կառուցման իրավական հետևանքների մասին» հարցի առնչությամբ 2004 թ. հուլիսի 9-ին տրամադրված խորհրդատվական կարծիքում: Նշված փաստաթղթում մասնավորապես նշվում է, որ ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածը ճանաչում

<sup>1</sup> Տե՛ս **Resolution 1368 (2001)**, Adopted by the Security Council at its 4370th meeting, on 12 September 2001, [https://undocs.org/S/RES/1368\(2001\)](https://undocs.org/S/RES/1368(2001))

<sup>2</sup> Տե՛ս **Resolution 1373 (2001)**, Adopted by the Security Council at its 4385th meeting, on 28 September 2001 [https://undocs.org/S/RES/1373\(2001\)](https://undocs.org/S/RES/1373(2001))

<sup>3</sup> Տե՛ս **Mary Ellen O'Connell**, **LAWFUL SELF-DEFENSE TO TERRORISM**, [https://scholarship.law.nd.edu/cgi/viewcontent.cgi?article=1596&context=law\\_faculty\\_scholarship](https://scholarship.law.nd.edu/cgi/viewcontent.cgi?article=1596&context=law_faculty_scholarship), էջ 889

<sup>4</sup> Տե՛ս **SEPARATE OPINION OF JUDGE SIMMA**, <https://www.icj-cij.org/files/case-related/116/116-20051219-JUD-01-05-EN.pdf>, էջ 4:

<sup>5</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1974 թ. դեկտեմբերի 14-ի թիվ 3314 բանաձևում, ինչպես նաև Հռոմի Ստատուտում տեղ գտած ագրեսիայի ակտի բնորոշումը, [https://crimeofaggression.info/documents/6/General\\_Assembly\\_%20Resolution\\_%203314.pdf](https://crimeofaggression.info/documents/6/General_Assembly_%20Resolution_%203314.pdf), [https://web.archive.org/web/20120320072358/http://www.icc-cpi.int/iccdocs/asp\\_docs/Resolutions/RC-Res.6-ENG.pdf](https://web.archive.org/web/20120320072358/http://www.icc-cpi.int/iccdocs/asp_docs/Resolutions/RC-Res.6-ENG.pdf)

է ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը մի պետության կողմից մեկ այլ պետության վրա զինված հարձակման պարագայում<sup>1</sup>:

Ոչ պետական ակտորներն իրավունքի դոկտրինայի տեսակետից չեն կարող դիտվել որպես պետություններ, և նման ամենացայտուն օրինակը «Իսլամական պետություն» ահաբեկչական կազմակերպությունն է: 2013 թ.-ին միջազգային հանրությունը բախվեց համաշխարհային պատմության մեջ նախադեպը չունեցող մի երևույթի՝ այսպես կոչված «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորմանը, որը կարճ ժամանակամիջոցում կարողացավ վերահսկողություն հաստատել Իրաքի և Սիրիայի զգալի տարածքներում ու փորձում էր գործել որպես պետություն: Իրավունքի դոկտրինայի տեսանկյունից «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը միանշանակ չի կարող դիտվել պետություն, քանի որ եթե այն անգամ ինչ-որ չափով բավարարում էր պետության երեք հիմնական հատկանիշներից երկուսին՝ տարածքի և բնակչության առկայություն, սակայն այն օժտված չէր իր տարածքի սահմաններում լիիշխանությամբ՝ հանրային իշխանության (օրենսդիր, գործադիր, դատական) ամբողջականությամբ: «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման վերահսկողության տակ գտնվող տարածքը միասնական չէր, դրա մեծ մասը միմյանցից կտրված էր, և անգամ ԻՊ որոշ դատական մարմինների, որոշակի օրենսդրական ակտերի առկայության դեպքում դրանց իրագործումն ԻՊ վերահսկողության տակ գտնվող ամբողջ տարածքում չէր կարող արդյունավետ իրականացվել<sup>2</sup>:

Պետությունների կողմից հավաքական ինքնապաշտպանության իրականացման պարագայում անհրաժեշտ է նկատի ունենալ նաև հետևյալ երկու նախապայմանների առկայությունը. պետությունը պետք է հայտարարի հարձակման ենթարկվելու մասին և պետք է օգնություն խնդրի այլ պետություններից: ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը Նիկարագուան ընդդեմ ԱՄՆ-ի (1986) գործով նախանշել էր նշված երկու նախապայմանները հավաքական ինքնապաշտպանության կիրառման դեպքում<sup>3</sup>:

Ելնելով վերոնշյալից՝ կարող ենք փաստել, որ ՄԱԿ-ի կանոնադրությամբ ամրագրված անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության իրավունքը պետությունը կամ պետությունները կարող են կիրառել մեկ այլ պետության/պետությունների կողմից զինված հարձակման ենթարկվելու պարագայում: Ոչ պետական ակտորների կողմից զինված հարձակման, ահաբեկչական գործողությունների իրականացման պարագայում անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության իրավունքի կիրառման հարցը վիճելի է, և այն հիմնականում կարող է դիտվել որպես «կեղծ ինքնապաշտպանություն»/ինքնապաշտպանության իրավունքի սխալ կիրառում: Ինքնապաշտպանության իրավունքի անվան տակ որևէ պետության դեմ կամ դրա տարածքում գործող ահաբեկչական խմբավորումների նկատմամբ ռազմական գործողությունների իրականացումը կարող է դիտվել որպես այդ պետության տարածքային ամբողջականության կամ ինքնիշխանության դեմ ոտնձգություն: Հարկ է նշել, որ վերջին տասնամյակներում միջազգային ահաբեկչություն

<sup>1</sup> St´u **Legal Consequences of the Construction of aWall in the Occopied Palestinian Territory, Advisory Opinion of 9 July 2004**, <https://www.icj-cij.org/files/case-related/131/131-20040709-ADV-01-00-EN.pdf>, էջ 62

<sup>2</sup> St´u **Marco Longobardo**, *The Self-Proclaimed Statehood of the Islamic State between 2014 and 2017 and International Law*, <https://westminsterresearch.westminster.ac.uk/download/d7f93e0b70f9da84557abc0f317e12d9cd9477c7446ba6450ab6e444b73599cd/150981/ISIS%20Statehood%20Anuario%20Espanol%20REV.pdf>, էջ 17:

<sup>3</sup> St´u **Christine Chinkin, Mary Kaldor**, *Self-Defense as a Justification for War: The Geo-political and War on Terror Models*, <https://www.cambridge.org/core/books/international-law-and-new-wars/selfdefence-as-a-justification-for-war-the-geopolitical-and-war-on-terror-models/9338749E5B4FB77BDB17E4CE68D4239A/core-reader>

նը վերածվել է անվտանգային գլոբալ սպառնալիքի, և աշխարհի տարբեր հատվածներում նկատվում է ահաբեկչական խոշոր ակտերի աննախադեպ աճ, որը հանգեցնում է մարդկային մեծաթիվ զոհերի, ոչնչացվում են նյութական, հոգևոր, մշակութային բազմաթիվ արժեքներ, լրջորեն վտանգվում են միջազգային խաղաղությունը և անվտանգությունը: Միջազգային հանրությունը պետք է լրջորեն արձագանքի այս խոշոր մարտահրավերին, մշակվի ահաբեկչության և դրա դեմ պայքարի միջոցների, մեթոդների շուրջ միասնական իրավական դիրքորոշում, գտնվեն համապատասխան իրավական լուծումներ և միջազգային արձագանքման արդյունավետ կառուցակարգեր, այդ թվում նաև՝ ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի տեսանկյունից:

Անդրադառնալով նաև պետության կողմից անհատական ինքնապաշտպանության իրավունքի սխալ կիրառմանը և ներքոնշյալ օրինակով փորձենք պարզել այս իրավական հիմնախնդրի էությունը:

2018 թ. հունվարի 20-ին թուրքական զորքերը հարձակում սկսեցին Սիրիայի Աֆրին բնակավայրի վրա՝ իրագործելով «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողությունը, որը, ըստ թուրքական աղբյուրների, ուղղված էր Սիրիայի հյուսիսից սպառնացող ահաբեկչական վտանգից, և թուրքական մզկիթներից մեկի վրա իրականացվել էր հրետակոծություն իբր այդ տեղանքից<sup>1</sup>: Ըստ թուրքական կողմի բարձրաստիճան պաշտոնյանների հայտարարությունների՝ նրանք իրականացնում էին իրենց ինքնապաշտպանության իրավունքը միջազգային իրավունքի ներքո և նպատակ ունեին չեզոքացնելու Սիրիայից հյուսիսից եկող ահաբեկչական վտանգը<sup>2</sup>: 2018 թ. մարտի 18-ին թուրքական զինված ուժերի և դրանց աջակցությունը վայելող այսպես կոչված Ազատ սիրիական բանակի ստորաբաժանումներն իրենց վերահսկողության տակ վերցրին Աֆրինի հիմնական մասը<sup>3</sup>:

Ինչպես հայտնի է, ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ ՄԱԿ-ի որևէ անդամ զինված հարձակման ենթարկվելու պարագայում կարող է դիմել անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության և իրականացված միջոցառումների մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել Անվտանգության խորհրդին:

Նախ անդրադառնալով առաջին նախապայմանին. արդյո՞ք հարձակման էր ենթարկվել Թուրքիան: Նշված հարցը բավականին վիճելի է, և հարձակման ենթարկվելու մասին ապացույցներն այնքան էլ արժանահավատ չեն: Սակայն անգամ եթե ենթադրենք, թե Թուրքիան հարձակման էր ենթարկվել և դիմել էր ինքնապաշտպանության, ապա Թուրքիայի հետագա քայլերի օրինականությունը միջազգային իրավունքի տեսանկյունից բավականին խնդրահարույց է:

Առաջին հերթին Թուրքիան այսպես կոչված «ինքնապաշտպանությունից» հետո պետք է անհապաղ իրականացված գործողությունների մասին տեղեկացնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, ինչը մինչ օրս չի կատարել: Աֆրինի ռազմական գործողությունների մեկնարկից հետո Ֆրանսիան Անվտանգության խորհրդի արտակարգ նիստ հրավիրելու կոչ արեց<sup>4</sup>: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներից ՌԴ-ն և ԱՄՆ-ն աջակցում են Թուրքիայի վկայակոչած փաստերին և

<sup>1</sup> St'u Turkey's Afrin op legitimate under international law, <https://www.aa.com.tr/en/middle-east/turkeys-afrin-op-legitimate-under-international-law/1043997>

<sup>2</sup> St'u Understanding Turkey's Afrin Operation, <https://www.csis.org/analysis/understanding-turkeys-afrin-operation>

<sup>3</sup> St'u Syria war: Turkish-led forces oust Kurdish fighters from heart of Afrin, <https://www.bbc.co.uk/news/world-middle-east-43447624>

<sup>4</sup> St'u French calls for emergency Security Council meeting on Syria, <https://www.reuters.com/article/us-mideast-crisis-syria-france/french-calls-for-emergency-security-council-meeting-on-syria-idUSKBN1FA0K5>

վերջինիս ինքնապաշտպանության իրավունքի իրականացմանը<sup>1</sup>: Նման պայմաններում ակնկալել, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը համարժեք արձագանք կտա, առնվազն անհնար խնդիր կարելի է համարել:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամներից կողմից քաղաքական, տնտեսական կամ այլ պատճառներով ոչ միասնական, կանխակալ դիրքորոշման արտահայտումը Աև լիազորությամբ չիրականացվող այս կամ այն ռազմական գործողությունների առնչությամբ խարխլում է այդ կառույցի արժանահավատությունը, հեղինակությունը և նախադրյալներ, նախադեպ է ստեղծում հետագա նմանատիպ գործողությունների կրկնության համար:

### *Եզրակացություն*

Հավաքական անվտանգության հայեցակարգի հիմնական նպատակը միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովումն է և այն խախտող պետության/պետությունների դեմ համապատասխան միջոցների ձեռնարկումը: Ինչպես տեսնում ենք, հիմնականում նման գործողությունները համապատասխան արձագանքի չեն արժանանում միջազգային հանրության, ՄԱԿ-ի և միջազգային խաղաղության ու անվտանգության համար պատասխանատու հիմնական մարմնի՝ Անվտանգության խորհրդի կողմից: Նման դեպքերում առաջին հերթին անհրաժեշտ է որոշել ազդեցիկ առկայության հարցը, սակայն այն ենթակա է Աև կողմից համապատասխան որակավորման և հաշվի առնելով ՄԱԿ-ի Աև որոշումների ընդունման ընթացակարգերը և այդ մարմնի քաղաքականացվածությունը՝ նման որոշման հավանական ճակատագիրը ՄԱԿ-ի Աև մշտական անդամների կողմից վետոյի արժանանալն է: Վետոն հաղթահարելու ընթացակարգեր ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված չեն, և դա կարող է նախատեսվել միայն կանոնադրության փոփոխության դեպքում: Իհարկե մոտ ապագայում ՄԱԿ-ի կանոնադրության նման փոփոխության հնարավորությունը ևս իրատեսական չէ, քանի որ այն պետք է արժանանա ՄԱԿ-ի Աև մշտական բոլոր անդամների հավանությանը, ինչն առնվազն անիրականանալի կարելի է համարել: Սա ստեղծում է փակ շղթա, իրավական ճգնաժամ, որը կարող է հաղթահարվել միայն ՄԱԿ-ի Աև մշտական անդամների քաղաքական կամքի, միասնական դիրքորոշման պարագայում:

Ակնհայտ է, որ ՄԱԿ-ի հիմնադրումից ի վեր միջազգային անվտանգության բազմաթիվ նոր սպառնալիքներ են երևան եկել՝ միջազգային ահաբեկչություն, կիբեռսպառնալիքներ, ոչ պետական ակտորների դերի մեծացում, գլոբալ կլիմայական փոփոխություններ, տարաբնույթ համաճարակներ, և առկա միջազգային իրավական կառուցակարգերը, մասնավորապես հավաքական անվտանգության համակարգը, չեն կարող համարժեքորեն արձագանքել նոր միջազգային անվտանգային սպառնալիքներին: Հետևաբար այս տեսանկյունից ևս ՄԱԿ-ի կանոնադրության փոփոխության, արդիականացման հարցն օրակարգային է: Գտնում ենք, որ ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովը ևս պետք է ձեռնամուխ լինի այդ ոլորտի միջազգային հարաբերությունների ամբողջական կարգավորմանն ուղղված միջազգային իրավական նոր փաստաթղթերի մշակմանը:

Սակայն սա ամենևին չի նշանակում, որ ՄԱԿ-ի կանոնադրությունը պետք է համարել «քարացած» փաստաթուղթ և իրաժարվել դրա՝ մասնավորապես ուժի կիրառմանն առնչվող դրույթների կիրառումից, ինչը որոշ միջազգային իրավագետներ-

<sup>1</sup> St´u Turkey is committing war crimes in Afrin, Syria, <https://theregion.org/article/12691-turkey-is-committing-war-crimes-in-afrin-syria>

րի, հատկապես Մ. Գլենոնի կարծիքով, պետք է կատարի ԱՄՆ-ն<sup>1</sup>:

ՄԱԿ-ի կանոնադրությունը միջազգային իրավունքի հիմնարար փաստաթղթերից մեկն է, բոլոր անդամ երկրների համար իրավական պարտադիր ուժ ունեցող փաստաթուղթ, և նրանում ամրագրված դրույթները ենթակա են պարտադիր կատարման բոլոր անդամ պետությունների կողմից, ինչն ամրագրված է Կանոնադրության 103-րդ հոդվածով:

Հարկ է ևս մեկ անգամ ընդգծել, որ ՄԱԿ-ի կանոնադրությունը և դրա համապատասխան դրույթները կտրականապես արգելում են միջազգային հարաբերություններում ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժի կամ դրա կիրառման սպառնալիքի օգտագործումը: Ուժի կիրառումը թույլատրվում է միայն ՄԱԿ-ի կանոնադրությամբ նախատեսված երկու դեպքերում՝ Անվտանգության խորհրդի լիազորությամբ և ինքնապաշտպանություն իրականացնելու պարագաներում, և բոլոր պետությունները պարտավոր են հետևել սահմանված նորմերին: Հարձակման ենթարկված և անհատական կամ հավաքական ինքնապաշտպանության նպատակով ուժ կիրառած պետությունը ևս հաշվետու է իր գործողություններում ու ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածի համաձայն՝ պետք է անհապաղ Անվտանգության խորհրդին տեղեկացնի իր կողմից որպես ինքնապաշտպանություն ձեռնարկված միջոցառումների մասին:

Ինչ վերաբերում է «հումանիտար ինտերվենցիային», ապա, ինչպես պարզ դարձավ «Պաշտպանելու պարտականություն» հայեցակարգի վերլուծությունից, դրա կիրառման վերաբերյալ ՄԱԿ-ի Աև 1674 բանաձևում արտահայտված դիրքորոշումից, Ինտերվենցիայի և պետության ինքնիշխանության հարցերով միջազգային անկախ հանձնաժողովի «Պաշտպանելու պարտականություն» զեկույցում ամրագրված դրույթներից, հումանիտար նպատակներով ռազմական ինտերվենցիաների դեպքում ՄԱԿ-ի Աև կողմից լիազորված լինելու հանգամանքը պարտադիր է:

Ինչպես ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի անդամ, միջազգային իրավունքի հայտնի տեսաբան Մ. Վուդն է նշում, մեկ կամ մի քանի, նույնիսկ հզոր պետությունները չեն կարող փոխել ՄԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված միջազգային իրավունքի կանոնները<sup>2</sup>: Իհարկե ակտուսանքով պետք է արձանագրենք, որ այդ պետությունները ՄԱԿ-ի Աև մշտական անդամների թվին են պատկանում. նրանց ձայնը որոշիչ է Աև կողմից ընդունվող բանաձևերում:

Վաղուց հասունացել է այն պահը, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան նախաձեռնի հավաքական անվտանգության ոլորտը կարգավորող միջազգային իրավական նորմերի կողիֆիկացման ու դրանք մեկ միասնական միջազգային իրավական ակտում ներառելու գործընթացը: ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի միջոցով այս գործընթացի իրականացումը հնարավորություն կընձեռի քննարկել և հստակեցնել այս ոլորտում պետությունների միջև գոյություն ունեցող տարածանությունները՝ առավել հստակ ձևակերպում տալով տարամեկնաբանությունների տեղիք տվող միջազգային իրավական նորմերին:

<sup>1</sup> Տե՛ս **Michael J. Glennon**, *Limits of Law, Prerogatives of Power: Interventionism after Kosovo* (2001), ինչպես նաև **Robert J. Delahunty**, *Paper Charter: Self-Defense and the Failure of the United Nations Collective Security System*, 56 *Cath. U. L. Rev.* 871 (2007), <http://scholarship.law.edu/lawreview/vol56/iss3/6>, էջ 945:

<sup>2</sup> Տե՛ս **Michael Wood**, *International Law and the use of force: What happens in practice?*, *Indian Journal of International Law*, Vol. 53, [http://legal.un.org/avl/pdf/ls/Wood\\_article.pdf](http://legal.un.org/avl/pdf/ls/Wood_article.pdf), էջ 365:

## РОЛЬ КОНЦЕПЦИИ КОЛЛЕКТИВНОЙ БЕЗОПАСНОСТИ В МЕЖДУНАРОДНОМ ПРАВЕ И ПРАВОВЫЕ ВОПРОСЫ ЕЕ ИМПЛЕМЕНТАЦИИ

Армен Закарян

Концепция коллективной безопасности определяет угрозы против международного мира и безопасности и коллективные средства борьбы против этих угроз. Ключевые проблемы, которые предотвращают имплементацию коллективной безопасности и эффективное функционирование Организация Объединенных Наций и ее ключевого органа, отвечающего за международный мир и безопасность, Совета Безопасности, составляют огромное количество. Если мы сгруппируем международно-правовые вопросы, которые препятствуют реализации концепции коллективной безопасности, их можно разделить на следующие основные группы: процедуры принятия решений Совета Безопасности ООН, в частности, злоупотребление правом вето Советом Безопасности ООН, попытки создать новые основания для применения силы и злоупотребление индивидуальной/коллективной самообороны.

## THE ROLE OF THE CONCEPT OF COLLECTIVE SECURITY IN INTERNATIONAL LAW AND LEGAL ISSUES OF ITS IMPLEMETTAION

Armen Zakaryan

The concept of collective security represents international arrangements defining international peace and security threats and the collective means of struggle against these threats. The key issues hindering implementation of collective security and effective functioning of the United Nations and the Security Council - its key body responsible for international peace and security are considerably high. If we group the international legal issues that hinder the implementation of the collective security concept, they may be divided into the following main groups: the UN Security Council's decision-making procedures, in particular, the abuse of the veto right by the UN Security Council permanent members, attempts to create new grounds for the use of force and misuse of individual/collective self-defense.

**Բանալի բառեր** – հավաքական անվտանգության հայեցակարգ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ, վետոյի իրավունքի չարաշահում, «հումանիտար ինտերվենցիա», պաշտպանելու պարտականություն, «վեդժ ինքնապաշտպանություն»

**Ключевые слова:** концепция коллективной безопасности, Совет Безопасности ООН, злоупотребление правом вето, гуманитарная интервенция, обязанность защищать, ложная самооборона

**Key words:** collective security concept, UN Security Council, abuse of vetto right, humanitarian intervention, duty to protect, misuse of self-defense